



ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ

(Աստվածաբանության դասախու)

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

79. ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԾԱՐԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ (Մարկ. ԺԴ 1-2)

- ԺԳ 1 Երբ նա տաճարից դուրս էր գալիս, իր աշակերտներից մեկը նրան ասաց. «Վարդապետ, տես ինչպիսի՞ քարեր են սրանք, և ինչպիսի՞ շինվածք»:
2 Հիսուս պատասխան տվեց նրան և ասաց. «Տեսն՝ և այդ բոլոր շինությունները. ճշմարիտ եմ ասում ձեզ. այդտեղ քար քարի վրա չպիտի թողնը ընկի, որ չքանովի»:

Մարկոսի ավետարանը մոտենում է իր ավարտին: Հիսուս դուրս է գալիս տաճարից վերջին անգամ լինելով: Նա այլևս չի մտնելու այնտեղ: Օգտվելով իր աշակերտներից մեկի տված հարցից նա որոշակիորեն հայտնում է, որ այն շենքը, որից քիչ առաջ դուրս եկավ, դատապարտված է կործանման, թեև այն կառուցման ընթացքի մեջ էր դեռ և արդեն իսկ՝ վեհաշուր:

Հրեաները իրավամբ կարող էին հապատանալ Երրուաղեմի տաճարով: Ունենալով պատմական երկար անցյալ և կառուցված լինելով զմայլելի դիրք ունեցող մի քաց հարթավայրում, երկրի ու երկնքի միջև, այն հանդիսանում էր հնադարյան ճարտարապետության գոհարներից մեկը:

Հիսուսի տեսած տաճարը, ըստ ժամա-

նակի, երրորդն էր: Առաջինը կառուցվել էր Սողոմոնի օրով, ակած 970 թվականից համբան Քրիստոս, և կործանվել 587 թվականին, բարելոնացիների կողմից Երուսաղեմի գրավման ժամանակ: Երկրորդը, որն ավելի համեստ էր, ակսել էր կառուցվել Քրիստոսից առաջ 520 թվականին, երբ հրեաներն արդեն վերադարձել էին աքսորից: Իսկ Քրիստոսից առաջ 20-ական թվականներին Մեծն Հերովդեսը ձեռնամուխ էր եղել մի երրորդ տաճարի շինությանը, որը շատ ավելի շքեղ էր, քան նախորդ երկուսը. այն ավարտվեց 64 թվականին, Հիսուսի մահից ավելի քան երեսուն տարի հետո, իսկ վեց տարի անց՝ 70 թվականին, կործանվեց: Հարթավայրում դեռևս երեսում են հիմքի քարաշարքերը, որոնց վրա բարձրանում էր այդ տաճարը և իշխում Կերորնի նովիտ և հին Երուսաղեմի վրա:

Հիսուսի, ինչպես և նրանից առաջ մարգարեների աչքին, տաճարի շքեղությունը և նրանում տեղի ունեցող արարողությունների գեղեցկությունը երբեք չեն կարող հստոցել այն մարդկանց մեղքերը, որոնք զբաղեցնում են այն: Տաճարը մի դատարկ գոհարատուփ է լոկ: Ավելին. ուս այն վարդը է, որ օրը ցերեկով երևում է կորոնական դեկավարների ամենավատարմությունը: Այն արժանի չէ գոյություն ունենալու:

Սշակերտներն արդեն տեսել էին Հիսուսի հակազդեցությունը այն բանի դեմ, ինչ տեղի էր ունենում այնտեղ (Մարկ. ԺԱ 15-19): Այժմ անանուն մի աշակերտ նրա բերանից իմանում է, որ տաճարի պատերը դատապարտված են կործանման: Եվ պա-

* Շարունակված «Էջմիածն» ամսագրի 1986 թվականի № № Բ-ԺԲ-Խց և 1987 թվականի № Ա-Խց:

տերի հետ ավերման է ենթարկվելու մի բան, որ շատ ավելին է, քան շենքը:

80. ՎԵՐԱՀԱՍ ԱՂԵՏՆԵՐ (Մարկ. ԺԳ Յ-8)

- ԺԳ. Յ ԵՎ մինչ նստած էր նա Զիթենյաց լեռան վրա, տաճարի դիմաց, Պետրոսն ու Հակոբոսը և Հովհաննեսն ու Անդրեասը, առանձին, հարցրին նրան.
- 4 «Ասա՛ մեզ, ե՞րբ պիտի լինի այս, և ինչ կիմի նշանը, երբ կատարվելու լինի այդ բոլորը»:
 - 5 Հիսուս պատասխանեց և ասաց նրանց. «Ձգո՞ւշ կացեք, ոչ ոք չխարի ձեզ.
 - 6 որովհետև շատեր պիտի գան իմ անոնով և պիտի ասեմ՝ ես եմ Քրիստոսը, և շատերին պիտի մոլորեցնեն:
 - 7 Սակայն երբ լսեր պատերազմների ձայներ կամ պատերազմների լորեր, տագնապահար չլիներ, որովհետև այդ պետք է լինի, բայց դեռ վախճանը չէ:
 - 8 Ազգ ազգի դեմ պիտի կնի և բագավորություն՝ թագավորության դեմ, և տեղ-տեղ երկրաշրջներ պիտի լինեն, սով և սրածություններ ու խռովություններ. բայց այդ բոլորը սկիզբն է երկան»:

Պետրոսը, Հակոբոսը, Հովհանները և Անդրեասը՝ առաջին չորս կանչվածները (Մարկ. Ա. 16-20), մոտածունք մեջ են ընկեր տաճարի կործանման մասին Հիսուսի կանչասաացույթան պատճառով: Նրանք ցանկանում են ավելին իմանալ: Օգտվելով նրա հետ մոտերմիկ մի պահի ընձեռած հնարավորությունից, մինչ նա նստել էր Զիթենյաց լեռան զայթափերից մեկի վրա, և տաճարի շինություններն էլ հիապանչ մի տեսարան էին պարզու մինչդ մարդկանց աշքերի առաջ, նրանք հրավիրում են նրան խոսելու գալիք այդ աղետի մասին, ճշտելու դրա ժամանակը և հայտանշանները:

Այն ժամանակ Հիսուս իր չորս աշակերտների համար սկսում է արտասանել մի կարևոր ճառ, որ Մարկոսի ավետարանի ամենաերկար ճառն է: Այն խոսքերը, որ նա արտասանում է, երկդիմի են: Տաճարի կործանումն այսուեղ նկարագրված է աշխարհի վախճանը ազդարարող մեծ աղետների նկարագրությանը համապատասխան բառերով, որովհետև տաճարի վախճանը, հիրավի, մի աշխարհի վախճանն է: Օգտագործված լեզուն փոխ է առնված «հայտնութենական գրականություն» անունով ծանոթ այդ ժամանակաշրջանի հրեական գրվածքներից. գրքեր, որոնք ավելի հաճախ

հանդես են գալիս իրեն մի երազատեսի հայտնությունները, և որոնց նպատակն է զորացնել հավատացյալների հավատը խոռվությունների ու հաղածանքների մթնոլորտում: Դրանցից երկուար մոտել են Աստվածաշնչի մեջ. դրանք են՝ Դամիելի գիրքը Հին Կոտակարանում և Սուրբ Հովհաննեսի Հայտնությունը՝ Նոր Կոտակարանում:

Իր չորս աշակերտներին ուղղված Հիսուսի քարոզից առանձնանում են մի քանի ցայտուն գծեր: Դրանք հատուկ են Անդության և բռնության բոլոր ժամանակաշրջանը լինի իրավասության մեջ տաճարի կործանման, Հոռմի Եկեղեցու կրած համաձանքների պատմության մյուս բոլոր տագնապակի շրջանները:

— Տպագորիչ իրադարձություններ՝ պատերազմներ, երկրաշարժներ, սով, նախապատրաստում են ճգնաժամը (համար 7-8):

— Աղմկարար քարոզիչներ օգտվում են դրանցից՝ իրենք իրենց ցուց տալու և մըտքեր պղտորելու համար (համար 6).

— Սակայն աշակերտը հրավիրվում է պահելու իր գգունությունը և չկորցնելու իր վստահությունը. «Ձգո՞ւշ կացեք, ոչ ոք չխարի ձեզ» (համար 5), «Տագնապահար չինեք» (համար 7) խոսքերը Հիսուսի տիրական հրահանգներն են, որոնք կրկնվում են նրա ճաղի ամրող ընթացքում:

Լ Հաստատակեն Երուաղեմի տաճարը դատապարտված է կործանման, և խախտու է աշխարհի հավատարակշությունը: Նոր ծննդներն ու նոր զարգացումները միշտ անցնում են մարկան որոշ ձևից (համար 8): Բայց կյանքը, որ ոչ մի աղետ չպիտի կարողանա իմել մեզնից, ավելի զորավոր է, քան տաճարը և ինքը՝ աշխարհը:

81. ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ (Մարկ. ԺԳ 9-13)

- ԺԳ. Յ «ԵՎ դեռ ձեզ էլ պիտի մատնեն ատյանների, և ծողովարանների մեջ պիտի տանշվեք. և ինձ համար կուսակացների ու թագավորների առաջ պիտի կանգնեք՝ ի վկայություն նրանց և բոլոր հերանունների:»
- 10 Բայց նախ պետք է որ Ավետարանը քարոզվի:
- 11 ԵՎ երբ ձեզ տանեն հանձնելու, առաջուց հոգ մի՛ արեք և մի՛ մտածեք, թե ինչ պիտի խոսեք, այլ ինչ որ ձեզ տրվի այդ նոյն ժամին, այն խոսեցեք, որովհետև դո՛ւք չէ, որ պիտի խոսեք, այլ Սուրբ Հոգին:
- 12 Եղբայրն իր եղբորը մահվան պիտի մատնի, և հայրը՝ որդուն, և որդիները

- հայրերի դեմ պիտի ելնեն ու պիտի
սպանեն նրանց:
- 13 Եվ իմ ամփան համար բոլորից պիտի
ատվեք. բայց ով որ մինչև վերջ համ-
բերի, նա կփրկվի»:

Աշակերտները պիտի հալածվեն: Նրանք
իրենց Տիրոջից տարրեր ճակատագիր չը-
պիտի ունենան: Հիսուս արդեն առիթ ու-
նեցել էր այդ բանն ասելու նրանց իր կրե-
լիք շարշարանքների մասին արած առա-
ջին հայտնությունից հետո.

Ով կամենում է ազատել իր անձը, պի-
տի կորցնի այն.
Խակ ով կորցնի իր անձը Ավետարանի
համար, պիտի ազատի այն:
(Մարկ. Լ 35)

Այս հայտարարությունը այժմ կոկնում է
բազում մանրամասնություններով: Ինչպես
իր ժամանակի բոլոր քրիստոնյաները, Մար-
կոսը նոյնպես գիտի, թե ինչ են եղել
սկզբնական Եկեղեցու կրած հալածանքնե-
րը: Բացի այդ, նա լավ է պատկերացնում
Հոռոմ քրիստոնյա համայնքի խիստ ծանր
կացությունը: Բառեր չեն պակասում նրան
նկարագրելու այդ մթնողորտքը:

Դժվարությունները նախ պիտի գան
հրեական իշխանությունների՝ ժողովարա-
նի և դատական ատյանի դեկավարների
կողմից: Աւտյանը, որի մասին Մարկոս
առաջին անգամ լինելով խոսում է այստեղ,
հրեական գերազույն դատարանն էր Հի-
սուսի ժամանակ: Այն բաղկացած էր յո-
թանառունեկ անդամներից, որոնք ընտը-
լում էին բարձրաստիճան կրոնավորների,
երեսի ընտանիքների և դպրուերի միջից: Դա իրոք ազնվականությունն էր՝ աշխար-
հական, հոգևորական և մտավորական ազ-
նուվականությունը: Այն մարդկանց խումբը,
որը նախապես տաճար էր եկեղեց տեսնելու
Հիսուսին հարց ուղղելու նրան իր իշխա-
նության մասին, բաղկացած էր քահանա-
յապեսներից, ծերերից և դափներից. ու-
րեմն, ինչպես երևում է, դա ատյանից ե-
կած մի պատվիրակություն էր (Մարկ. ԺԱ
27—38): Ինչ վերաբերում է Հիսուսին
մահվան դատապարտելու որոշմանը, այդ
որոշումը ընդունված պիտի լիներ գիշերով,
արտահերթ մի մաստի ընթացքում. ատյա-
նի լրիվ կազմի կողմից (Մարկ. ԺԴ 58—
65):

Հոռոմական իշխանությունները նոյն-
պես ետ չպիտի մնային նրանցից. թագա-

վորներ ու կառավարիչներ գործուն դեռ
պիտի խաղային քրիստոնյաների դեմ ու-
ղղված հալածանքների մեջ: Քաղաքում
քրիստոնյաները համարվում էին թշնամի-
ներ, որովհետև մերժում էին պաշտել կայ-
սերական կրոնը: Հրեաստանում հոռոմայե-
ցիները մասսամբ միջամտում էին ներքին
գործերին. օրինակ՝ անհրաժեշտ էր ստա-
նալ նրանց համաձայնությունը իրեական
ատյանի կողմից պահանջված առավելա-
գույն պատժի գործադրման համար: Այդ-
պես է, որ Հրեաստանի կառավարիչ Պի-
դատուր վճռական դեր ունեցավ Հիսուսի
մահվան մեջ:

Սակայն կրոնական հալածանքի ամենա-
ցավալի հետևանքներից մեկը այն բաժա-
նումներն էին, որոնք առաջ էին գալիս
մինենում ընտանիքի ծոցում (համար 12):
Եկեղեցու պատմությունը լեցում է հարա-
զատների միջև անվստահության և մատ-
նությունների դեպքերով: Եվ այդ ողբեր-
գական դեպքերը, պահ՝, հատուկ չեն ե-
ղել միայն հմատարին. մեր օրերում էլ,
այսուեղ, որտեղ հալածվում է քրիստոնեու-
թյունը, դրանք դեռևս ընթացիկ երևույթ-
ներ են: Սեր-Աստծո կրոնը կարող է ա-
ռաջ բերել անշափ ատելություն:

Հիսուս իր խոսքերով ուզում է օգնել ա-
շակերտներին, որպեսզի կարողանան դի-
մագրավել այդ անխուսափելի ծանր կա-
ցություններին.

— Նախ չտալ դրանց ավելի մեծ կարե-
վորություն, քան ունեն իրականում: Դրանք
չեն կարող արգելք հանդիսանալ Ավետա-
րանի տարածմանը. ընդհակառակը, խա-
ղաղության շրջաններում լինի, թե ավելի
ծանր ժամանակներում, այն ի վերջո պի-
տի հասնի աշխարհի հեռավոր ծայրերը
(համար 10):

— Անոնինետև չվստահել միայն սեփա-
կան ուժերին՝ դուրս գալու համար դրանց
դեմ. Սուրբ Հոգու օգնությունն երաշխա-
վորված է բոլոր նրանց համար, ովքեր
թշնամի իշխանությունների ատյանի առաջ
պիտի կանգնեն: Բավական է, որ նրանք
իրենց բերանները պատրաստ պահեն այն
խոսքերի համար, որ պիտի դրվեն նրանց
բերանը (համար 11):

— Եվ վերջապես, բոլոր դեպքերում, ա-
մուր պահել իր անձը (համար 13): Ինչ-
քան էլ հզոր լինեն հալածանքները, նրանք
իշխանություն ունեն միայն մարդու երկ-
րային կյանքի վրա, որը, այսպես թե այն-
պես, մի օր վերջ է գտնելու: Չարժե, հե-
տևաբար, դրա համար զրիել ճշմարիտ
կյանքը:

82. ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ
(Մարկ. ԺԳ 14—23)

- ԺԳ 14 «Երբ տեսնեք ավերածության պըղ-
ծությունը՝ անձնապես տեղ գտած
այնտեղ, որ չափոք է լինեք (ով կար-
դում է, թող հասկանա), այն ժամա-
նակ նրանք, որ Հրեաստանում են,
լեռները թող փախչեն».
- 15 և ով տաճիքի վրա է, թող չիշնի և
տուն չմտնի՝ այնտեղից բան վերցնե-
լու.
- 16 և ով արտի մեջ է, թող ետ չդառնա՝
իր գգեստները վերցնելու:
- 17 Բայց վայ՝ հոդներին և ստնտուներին
այն օրերին:
- 18 Աղոյեցնք, որ ձմեռ ժամանակ չինի
դա:
- 19 Այդ օրերը պիտի լինեն օրեր այնպի-
սի նեղությունների, որպիսիք չեն ե-
ղել երեք արարչագործության սկզբ-
ություն մինչև այժմ և չեն կ լինի:
Եվ եթե Աստված այդ օրերը իր ըն-
տրյալների համար չկարճեր, ոչ մի
մարդ չէր ազատվի. բայց նա իր ըն-
տրյալների պատճառով, որոնց ընտ-
րեց, կարճեց ազդ օրերը:
- 21 Այն ժամանակ եթե մեկը ձեզ ասի, թե՝
ահա՝ այստեղ է Քրիստոսը կամ այն-
տեղ, չհավատաք.
- 22 որովհետև սուս քրիստոսներ և սուս
մարգարեններ պիտի եղնեն և նշաններ
ու զարմանալի գործեր պիտի ցուց
տան՝ մոլորեցնելու նպատակն, եթե
հնար լինի, նույնիսկ ընտրյալներին:
- 23 Բայց դուք զգո՞ւց եղեք. ահա առա-
ջուց ձեզ ամեն ինչ ասացի»:

Առաջին աղետների և խատագույն հա-
լաձանքների մասին ասված խոսքերից հե-
տու Հիսոս շարունակում է իր հայտնու-
թյունը վերջին փորձության մասին, նախ-
քան եղելությունների վախճանը: Նրա
խոսքերը առեղծվածին են: Ավետարա-
նիչը գիտակցում է այդ, բանի որ գրում է. «Ով կարդում է, թող հասկանա» (համար
14):

Ինչ որ ապրօք է, ուա այն է, որ հայտնը-
ված եղելությունն այնքան ահազդում է, որ
փախուստը լավագույն լուծումն է: Ամեն
ինչ, որ կարող է պատճառ հանդիսանալ
արգելակելու կամ դանդաղեցնելու այդ
փախուստը, ձախորդություն է. ձմեռը, հղու-
թյունը կամ փոքր երեխանները: Ամեն քայլ
դեպի ետ՝ վերատին ձեռք բերելու համար
կորցրած որևէ իր, կարող է ճակատագրա-
կան լինել: Ամեն բանից առաջ ակտը է
փախչել, փախչել հնարավորին չափ շուտ:

Սակայն ո՞րն է այդ սարսափազդու ե-
ղելությունը:

Մարկոսն այն կոչում է «ավերածության
աղծություն», մի արտահայտություն, որ
շատ է օգտագործված Դանիելի գրքում և
ցույց է տալիս Երուսաղեմի տաճարի վրա
եկած մեծ դժբախտությունը. ամենօրյա
զոհեր այլևս չեն կարող մատուցվել այն-
տեղ այն պատճառով, որ այդ ժամանակ
ընդհատվել էր այն երկար շղթան, որով
արտահայտվում էր Տիրայելի պաշտա-
մունքը իր Աստուծո նկատմամբ: Սորարև,
Քրիստոսից առաջ մոտ 167 թվականին Ե-
րուսաղեմի տաճարը աղծվել էր ասորա-
կան թագավոր Անտիոքոս Եպիփանոսի
կողմից, որը օլիմպիական Յուպիտերի ար-
ձանն էր տեղադրել այնտեղ այն հոյսով,
որ կարողանա վերացնել հրեական կրո-
նը: Այդ զարդելի արարքը խորապես վի-
րավորել էր իսրայելացիների խիճը: Դա-
հնելի գրքում Անտիոքոս Եպիփանոսը ներ-
կայացված է որպես մարմնացած ամբա-
ռոշտություն:

Զորություններ հառնեն պիտի նրանից
ու պիտի պիտեն սրբարանը բռնությամբ.
Պիտ վերացնեն զոհագործումն ամենօրյա
Եվ հաստատեն պղծությունն ապականու-
թյան:

(Դանիել ԺԱ. 31)

Օգտագործելով Դանիելի գրքի արտա-
հայտությունը՝ Հիսոս հայտնում է նովն-
պիսի ատելի մի եղելության մասին, ինչ-
պիսին հնում կատարված այդ պղծությունն
էր, սակայն նա տաճարի մասին չի խո-
սում: Եվ այն քերականական դարձվածքը,
որ նա գործածում է, հասկացնել է տալիս
արդեն, որ խոսքը ինչ-որ ահազդու մի ան-
ձի ներկայության մասին է և ոչ թե հնթա-
ռուսական մի աստուծու արձանի: Մարդ
կարող է գլուխը կորցնել՝ ենթադրություն-
ներ անելով այդ անձի ինքնության մասին.
արդյոք խոսքը մի կեղծ քրիստոսի մասին
է, մի կեղծ մարգարեկի՝ կամ մարմնացյալ
սատանայի: Նրա եղությունը անկատա-
երկար ժամանակ կմնա խորիրդավոր...

Այսուհաներձ, այդ հարձակման հետ
միաժամանակ, որի ընթացքում չարը իր
գերագույն փորձն է կատարում, Աստված
հսկում է: Նրա հոգատարությունն արտա-
հայտվում է փորձության օրերը կարճելու
մեջ, որպեսզի հավատացյալները իրենց ու-
ժերի հնարավորությունից ավելի փորձու-
թյան շենթարկվեն (համար 20):

Հարդկավոր է, ուրեմն, լինել աշարութ,
դա անհրաժեշտ է. բայց միաժամանակ

նաև՝ վստահող: Վստահութեան և աչալըր-
ջության միջև հավասարակշռություն պահ-
պանել դժվար պիտի լինի աշակերտների
համար:

83. ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԳԱԼՍՏՅԱՆ ՕՐԸ
(Մարկ. ԺԳ 24—27)

- ԺԳ 24 «Բայց այդ օրերին, այդ Անդությու-
նից հետո, արեգակը պիտի խավարի,
և լուսին իր լուսը չպիտի տա:
25 Եվ աստղերը երկնքից վայր պիտի
թափվեն, ու երկնքում զորությունները
պիտի շարժվեն:
26 Եվ այն ժամանակ պիտի տեսնեն
մարդու Որդուն՝ եկած ամպերի վրա-
յով՝ զորությամբ և բազում փառքով:
27 Եվ այն ժամանակ պիտի ուղարկի իր
հրեշտակներին ու պիտի հավաքի իր
ընտրյալներին չորս կողմերից, երկրի
ծագերից մինչև երկնքի ծագերը»:

Եղելությունների վախճանը պետող
փորձություններն այժմ վերջացել են: Ծըլի-
րության և անձկության օրերին հաջորդում
է լուսավոր մի օր, երբ հաստատվում է
մարդու Որդու և ընտրյալների վերջնական
հայրժանակը: Տաճարի կործանման և աշ-
խարի վախճանի մասին Հիսուսի ճառը
բացվում է պայծառ հեռանկարների վրա:

Կարելի է մտածել, սակայն, թե ահազ-
ո՞ու երկությունները հեռու են վերջացած լի-
նելուց: Մենք սիրում ենք արևի ջերմու-
թյունը և լուսնի լուսի գեղեցկությունը: Աստղերի գծագրությունը անամայ երկն-
քում արարչագործության հրաշալիքներից
մենք չենք միթե: Ուրեմն ինչպես կարող ենք
ուրախանալ երկնային մարմինների փլու-
զումով, որի մասին խոսում է Հիսուս (հա-
մար 24—25):

Այսպիսի մի հակազդեցություն, որ բնա-
կան երևույթ է այսօրվա մարդու համար,
շատ հեռու էր մեր թվագրության առաջին
դարի հրեական մտածողությունց: Այդ
ուրարջանում տիեզերական վայրիվե-
րումները ավանդական նշաններ էին ար-
տահայտելու համար Աստուծո հայրժանա-
կը Խրայելի թշնամինների վրա: Նման
վայրիվերումներ, չքեղ մանրամասնու-
թյուններով, համախակի նկարագրված են
այնպիսի գործերի մեջ, որոնք ընդհանուր
անվանումով կոչվում են «հայտնութեանա-
կան գրականություն». Դրանք, մի քիչ ա-
վելի զուսակ ձևով, նկարագրված են նաև
Հին Կտակարանի մարգարեական գրքե-
րում: Եսային հետևյալ բառերով է նկա-
րագրում Բաբելոնի՝ Խրայելի ավանդա-
կան թշնամու. վերահաս կործանումը.

Քանզի երկնքի աստղերն ու աստղահով-
լերը բոլոր
իրենց լուսը չպիտի տան բնավ.
Պիտ խավարի արեգակն հենց ծագելու
վայրկանին,
Եվ լուսին իր լուսը չպիտի շողացնի:
(Եսայի ԺԳ 10)

Չպետք է մոռանալ, որ հնադարի մարդ-
կանց համար արևը, լուսինն ու աստղերը
հեթանոսական աստվածություններ էին և
հետևաբար հրեական կրոնի համար՝ չար-
ազդեցիկ զորությամբ օժտված կուրքեր:
Ծշմարիտ Աստուծո վերջնական հայթա-
նակը նշանալում է հրանց կործանումը:
Սուրբ Պողոսը հենց այս մտավորության է
արձագանքում, երբ ոգեկոչում է աշխարհի
թագավորի՝ Քրիստոսի վերջնական հայ-
թանակը.

Եվ գալու է վախճանը, երբ որ տա թա-
գավորությունը Աստուծո և Հոգ Ճեռքը, երբ
կործանած լինի բոլոր իշխանությունները
և ամենայն պետություն և զորություն:
(Ա. Կորնթ. ԺԵ 24)

Եթե մենք ցանկանայինք նույն բանն ա-
սել ալյուրվա բառերով, անկասկած պիտի
խստինք միջուկային գենքերու ոչնչացման
(որոնցով լցված է մեր մոլորակը) կամ
ամրողատիրական տնտեսությունների վե-
րացման մասին:

Երբ որ բոլոր արգելքները վերացած լի-
նեն, այն ժամանակ ճանապարհը ազատ
կլինի, որպեսզի Հիսուս ցույց տա իր ար-
դար և խաղաղ թագավորությունը վերա-
նորոգված մի աշխարհի վրա: Սա Դամի-
ելի գործից փոխ առնված մի հատված է՝
նկարագրելու համար Քրիստոսի գալուս-
տը: Նա ներկայացված է մարդու Որդու
խորհրդավոր գծերով, եկած ամպերի վրա-
յով՝ հաղորդակցության մեջ դնելու եր-
կինքն ու երկիրը.

Եվ ահա երկնքի ամպերի վրայով
Գալիս էր իբրև մարդու Որդի...
Ու նրան տրվեց իշխանություն,
Պատիվ և թագավորություն.
Եվ ազգերը, ցեղերն ու լեզուները բոլոր
Պիտի ծառայեն նրան...
(Դամիել Է 13—14)

Դա կլինի չարի վրա բարու հայթանա-
կի այնքան սպասված հրաշալի օրը: Եվ
այդ օրը հնարավոր կրտանա մահվան վրա
Հիսուս Քրիստոսվ իրագործված կյանքի
հայթանակով:

**84. ԽՄԱՆՍԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ
ՆՇԱՆԵՐԸ (Մարկ. ԺԳ 28—32)**

- ԺԳ 28 «Բայց դուք այդ թգենո՞ւց սովորեցեք առակը. ჩենց որ նրա ոստերը կակիեն, և նրա վրա տերև դուրս գա, իմանում եք, որ ամառը մոտ է: Նոյնակես և դուք. երբ այս բոլորը կատարված տեսնեք, իմացե՞ք, որ նա մոտ է, դոների առջև: 30 Ծշմարիտ եմ ասում ձեզ, որ այս սերունդը չի անցնի, մինչև որ այս բոլորը կատարվեն:
- 31 Երկինք ու երկիր կանցնեն, բայց իմ խորքերը չեն անցնի: 32 Սակայն այդ օրվա և ժամի մասին ոչ ոք չգիտե. ո՞չ հրեշտակերը երկրներում և ո՞չ է Որդին, այլ միայն Հայոց:

Բնությունը ուսուցիչ է: Ծառերն ու բույսերը իրենց վրա կրում են համապատասխան եղանակի նախանշանները շատ ավելի վաղ, քան այն հայտնի կդառնա: Այսպես, ամենամատղաշ թգենին մի տեսակ առակ է գործողության մեջ: Նրա բողոքները հայտնում են ամառվա գալուառը, ինչպես աղետները (Մարկ. ԺԳ 3—8), հալածանքները (Մարկ. ԺԳ 9—13) և վերջին փորձությունը հայտնում են այն վերջնական եղելությունը, որին և նվիրված է Հիսուսի ճառը: Սակերտները հարավորություն ունեն վերծանելու ժամանակների նշանները, ինչպես որևէ գյուղացի իր դիտղականության շնորհիվ կարող է կանխատեսել ամառվա շուտ կամ ուշ գալը:

Աղջուամենայնիվ, կենտրոնական եղելությունն ինքը, որի մոտալու լինելը ցուց են տպիս այդ բոլոր նշանները, մնում է շատ անորոշ: Արդյոք խնդիրը Երուսալեմի տաճարի կործանման է վերաբերում, որի մասին հարց տրվեց Հիսուսին. կամ այլ վայրիվերումների, որոնք պիտի նշեն մի նոր ժամանակաշրջանի սկիզբը. կամ մարդու Որդու գալատյան, որի մասին հենց նոր ակնարկություն եղավ: Գրվածքում խոսվում է ինչ-որ մերձավորության, «ողոքների մոտ» ինչ-որ ներկայության մասին, բայց դրանից ավելին չի ասվում: Այս նոր կացությունը պարզապես համեմատված է ամառվա գալուսի հետ, ինչը թույլ է տալիս հասկանալ, որ հարցը մի ուրախ եղելության մասին է, և աշակերտների հույսը կարող է ուղղվել դեպի այդ ուրախ եղելությունը:

Այս հատվածում եղած այլ խոսքեր և նոյնքան դժվար է հասկանալ: Թվում է՝ Հի-

սուս նախ հայտնում է, թե ինչի մասին որ խոսում է, պիտի իրականան մոտ ապագայում. «Այս սերունդը չի անցնի, մինչև որ այս բոլորը կատարվեն» (համար 30): Երկու նախադասություն հետո նա ընդունում է, որ չգիտի դրա ժամանակը, և դա Հոր գաղտնիքն է (համար 32): Աստվածաբանները երկար մտածել են Հիսուսի կողմից խոստվանված այս անգիտության մասին, որից անշուշտ պետք է եղակացնել, որ մարդացած Որդին նախապես ամեն ինչ չգիտեր: Հիսուս այստեղ արտահայտվում է այնպիսի նախադասություններով, որոնք մոտ են Հին Կոտակարանի մարգարեական պատգամներին «որոնք մահամանակ առեղծվածային են ու հանդիսավոր և արտահայտում են հարգանք Աստուծո խորհրդի և իրավունքների նկատմամբ: «Երկինք ու երկիր կանցնեն, բայց իմ խորքերը չեն անցնի» (համար 31): Եսային և այլ մարգարեներ արտահայտվել են համանան խորքերով.

**Խոտը չորանում է,
Մաղիկը՝ թառամում,
Բայց խոսքն Աստոծն
Մնում հավիտյան:**

Հիսուս հայտնում է, որ սպասվում է դրժվարություններով լեցուն մի ապագա, որն ունենալու է երշանիկ վախճան, բայց որը նախապես չի գծված: Վաղվա օրը ևս կին այնպիսին, ինչպես մարդիկ այն կանեն:

85. ԼԻՆԵԼ ԱՉԱԼՈՒՐՁ (Մարկ. ԺԳ 33—37)

- ԺԳ 33 «Զգո՞ւշ եղեք, հսկեցե՞ք և աղոքեցե՞ք, քանի որ չգիտեք, թե ե՞րբ է ժամանակը.
- 34 Ինչպես հեռու երկիր գնացած մի մարդ, որ կրողնի իր տունը և իր ծառանքներին իշխանություն կտա և յուրաքանչյուրին՝ իր գործը, և դռնապանին կպատվիրի, որ արթուն լինի:
- 35 Արդ, արթո՞ւն կացեք, որովհետոն չգիտեք, թե ե՞րբ կամ տանտերը՝ երեկոյան՝ թե՝ կեսդիշերին, աքրորական չին, թե՝ առավոտյան դեմ:
- 36 Գուցե հանկարծակի գալով՝ ձեզ քնի մեջ գտնի:
- 37 Բայց ինչ որ ձեզ եմ ասում, ամենքին եմ ասում արթո՞ւն կացեք:

Այս հրահանգներով էլ ավարտվում է այն երկար ճառը, որ Հիսուս ուղղում է Պետրոսին, Հակոբոսին, Հովհաննեսին և Անդրեասին ի պատասխան այն հարցին, որ նրանք տվել են նրան տաճարի կոր-

ծանման մասին: Երբ քննենք այդ ճառը հետադարձ մի հայացքով, այն մեզ կերեւա որպես մի տեսակ կոնքերո՞ւ բաղկացած երեք մասից և միանգամայն լավ կառուցված:

1. Տգմաժամային կացություններ

— Աղետներ (ԺԳ 3—8).

— Հաղածաքներ (ԺԳ 9—13).

— Վերջին փորձություն (ԺԳ 14—23):

2. Կախճան

— Մարդու Որդու գալստյան օրը (ԺԳ 24—27).

3. Խորհրդներ աշակերտներին

— Իմանալ ժամանակների հշաները (ԺԳ 28—32).

— Լինել աշալորչ (ԺԳ 33—37):

Տգնաժամերը կարող են ծնունդ տալ վախի, բայց վախճանը մի ուրախ եղելություն է, որի վրա կարող է հենվել հոյսը: Նաև մոտալու դժվարությունների պատճառած վախի և Աստուծու կողմից ընտրյալներին վերապահված վերջնական ուրախության միջև պրկված աշակերտի պարտականությունը պիտի լինի հանդես բերել հստակատեսություն, զգայուն վերաբերունք և մետաքրքրություն աշխարհի իրադարձությունների նկատմամբ, գործուն աշարժություն և վստահություն:

Ապագան ո՞չ վարդագույն է և ո՞չ եւ գորչ:

Բոլոր նրանց, ովքեր փակ հորիզոններ են տեսնում միայն, Հիսուս հայտնում է գալուստը լուսավոր մի օրվա: Խսկ բոլոր նրանց, ովքեր լողում են հեշտ ու երանաւես կյանքի ջրերի մեջ, նաև հիշեցնում է ներկա ժամի դժվարությունները և այդ կյանքից հրաժարվելու անհրաժեշտությունը:

Ամեն մարդու համար, ինչպես և Հիսուսի, չարչարանք և հարություն կազմում են անրաժամելի մի ամբողջություն:

86. ՉԱՐՉԱՐԱՆՔԻ ՍԿԻԶԲ (ԺԴ 1—2)

ԺԴ 1 Երկու օր հետո Զատիկ էր ու Բաղադրակերաց տոնը: Քահանայապետները և դպիրները հնար էին որոնում, թե ինչպես նրան նենգությամբ բռնելով սպանեն:

2 Բայց ասում էին. «Ո՛չ այս տոնին, որպեսզի ժողովրդի մեջ խոռվություն չինի»:

Չարչարանքների պատմությունն սկսվում է: Այն եղելությունները, որոնց մասին Հիսուս հայտնել էր Պետրոսի խոստովա-

նությունից ի վեր (Մարկ. Ղ 27—30), այժմ տեղի պիտի ունենան ընթերցողի աշքերի առաջ:

Զատիկի և Բաղադրակերաց կրկնակի տոների կատարումը առիթ է հանդիսանում դրանց: Առաջինը՝ Զատիկը, սկզբնապես եղել է անանապահությամբ գրաղվող վաշկատուն ցեղերի տոնը, որոնք հոյսի նախածին գանձները վկիրում էին Սատծուն. մինչդեռ երկրորդը՝ Բաղադրակերաց կամ անթրիսոր հացերի տոնը, մի արարություն էր, որով մշակները նոր հնձված արմտիքը տալիս էին տանուտիրոջը որպես հարկ: Խորայելում այս երկու տոնակատարությունները միացել էին իրար և նշում էին հրեա ժողովրդի կյանքում տեղի ունեցած հիմնական իրադարձությունը՝ նրա եղբայր Եգիպտոսից: Դա տարվա ամենամեծ տոնն էր:

Զատիկի և Բաղադրակերաց տոնն ազդեցության տակ Հիսուսի չարչարանքների պատմությունը ստանում է գրեթե ծիսական մի Ակարագիլոյ: Մինչ նրա առաջին հակառակորդները, Գալիլիայում նրա քարոզության սկզբին, ավելի շատ փարիսեցները ու հերովիսականները էին (Մարկ. Գ 6), ներկայի թշնամիները, նրանք, ովքեր ուղղակի պատահանատուններն են լինելու նրա մահվան, պատկանում են քահանայական շրջանակներին. քահանայակենները ու դպիրները, որոնք թշնամությամբ էին լցված նազարետի մարգարեի դեմ տաճարում տեղի ունեցած գայթակղությունից ի վեր (Մարկ. ԺԱ 15—19), որպես խարդախ զոհագործներ, պիտի մասնակցեն զոհարարական մի արարության, որի զոհը պիտի լինի Հիսուս:

Սակայն պեսոք է արագ շարժվել. Զատիկի տոնի առթիվ մեծ բազմություն կհավաքվի Երուսաղեմում. Վտանգ կա, որ մարդիկ դիրքորոշվեն Հիսուսի կողմը, որի քարոզությունը բավականաշափ ժողովրդականություն է վայելում: Մարկոսն արդեն ասել է՝ «շատ ժողովուրդ նրան լուս էր սիրով» (ԺԲ 37):

Ուրեմն նրանք այնպես պիտի անեն, որ տոներից առաջ ամեն ինչ վերջանա. դատավարությունը պիտի շտապ արվի-պարտվի. կարծեցյալ վճռի գործադրությունը պիտի լինի հսկական մարդասպանություն:

87. ՀԻՍՈՒԽ ՕԾՎՈՒԽ Է ԻՐ ՄԱՀԻՑ ԱՌԱՋ (Մարկ. ԺԴ 3—9)

ԺԴ 3 Եվ մինչ նա Բեթանիայում էր, բրոտ Սիմոնի տանը սեղած հստած, եկավ մի կին, որ հետև ուներ նարդո-

- սի ազնիվ, մեծարժեք յուղի մի շիշ-
և շիշը կոտրելով՝ յուղը թափեց Հիսու-
սի զլխին:
- 4 Աշակերտները զայրացան և ասացին.
«Են յուղը ինչո՞ւ այսպես պիտի կոր-
շեր.
- 5 կարելի էր այդ յուղը վաճառել ավելի
քան երեք հարյուր դահնեկանի և տաղ
աղքատներին»: Եվ խիստ զայրանում
էին նրա վրա:
- 6 Բայց Հիսուս ասաց նրանց. «Թո՞ւզ
տվեք դրան. ինչո՞ւ նեղույթուն եք տա-
լիս, որովհետև նա ինձ մի բարի գործ
արեց:
- 7 Ամեն ժամ աղքատներին ձեզ հետ ու-
նեք և երբ ուզենաք, կարող եք նրանց
բարիք անել: Բայց ինձ ամեն ժամ ձեզ
հետ չունեք:
- 8 Դա, ինչ որ կարող էր, արեց. առա-
ջուց խնկավետեց իմ մարմինը ի նշան
պատաճքվելու:
- 9 Շշմարիտ եմ ասում ձեզ, ուր էլ քա-
րոզվի այս Ավետարանը ամբողջ աշ-
խարհով մեկ, ինչ որ նա արեց, այդ
ևս պիտի պատմվի նրա հիշատակի
համար»:

Սիմոնը հնում բորոտ մի մարդ անոք է
եղած լիներ, որ դեռևս պահել էր անցյալի
իր հիվանդության համար իրեն տրված
այդ մականունը. եթե նա կարող էր սեղա-
նակից հյուրեր ընդունել, նշանակում է՝
առողջացել էր: Նրա մասին ուրիշ ոչինչ
չգիտենք: Գալով կնոջը՝ չի տրված նույ-
նիսկ նրա անունը: Ինչ որ գիշավորապես
հետաքրքրում է ավետարանչին, ուա նրա
արարքն է, որի նշանակությունը այդտեղ
ներկա եղող անձանց մորքի հասողությու-
նից շատ վեր է:

Զգիտենք, թե ինչո՞ւ այդ կինը, որը վըս-
տահարար սեղան չէր նստած տղամարդ-
կանց հետ, առաջ էր եկել խնկավետելու հա-
մար Հիսուսի գլուխը: Նրա արարքը բոյո-
րովին անիմաստ է: Երեք հարյուր դահնե-
կանը մի հողագործի երեք հարյուր օրվա
աշխատավարձն է: Այդպիսի մի գումար
մսիսված տեսնել մի վայրկյանում իսկա-
պես որ ընդպետությունից է:

Առատորեն թափված այդ յուղը, հիրա-
վի, անմիտ մի վատնում է, եթե նկատի
չունենանք այն մարգարեական նշանակու-
թյունը, որ Հիսուս տախին է այդ արարքին.
«Առաջուց նա խնկավետեց իմ մարմինը ի
նշան պատաճքվելու» (համար 8): Հրեա-
կան պահության մեջ, պատշաճ մի պա-
տաճք կամ գերեզման տալ մի դիակի,
նշանակում էր կատարել մի բարի գործ,

ինչպես ողորմությունը: Հին Կտակարանն
այդ բանը հիշեցնում է Տուքրիթի նոր՝ Բա-
րելոնում հրեաների գերության ժամանակ-
վա առասպելական ներուի արտասանած
խոսքերի միջոցով.

Բազում ողորմություններ էի անում իմ
եղբայրներին. իմ հացը տապիս էի նրանց,
ովքեր քաղցած էին, և իմ հագուստները՝
ովքեր մերկ էին: Եվ երբ տեսնում էի իմ
ազգակիցներից մեկին, որ մեռած էր և
պարսպից դուրս նետված, թաղում էի
նրան:

(Տուքրիթ Ա. 16—17)

Հիսուս կնոջ կողմից կատարված այդ
արարքի մեջ տեսնում է անհրաժեշտ մի
բան, ավելի անհրաժեշտ, քան աղքատնե-
րին տրվող օգնությունը: Դա իր սեփական
մարմնի օծումն է, որը տեղի չախտի ու-
նենար: Ավագ ուրբաթ օրը, երեկոյան,
նրա մարմինը գերեզման ախտի դրվեր
հապշտապ: Երեք անձնվելու կանայք, ձեռք-
ներին օծանելիքներ, գերեզման ախտի գա-
լին կիրակի օրը, առավոտյան՝ ամբողջաց-
նելու համար գերեզմանում կատարվելիք
սովորական արարողությունները, բայց
նրա մարմինն այնտեղ չախտի գտնեն (Մարկ. ԺԶ 1—8):

Հայ Մարկոսի, Հիսուս օծվել է իր կեն-
դանության օրոք, բորոտ Սիմոնի տանը,
ճաշի ժամանակ, Բեթանիայում, իր մահ-
վանից երկու օր առաջ: Սա մի ձև է ասե-
լու համար, որ մահը նրա վրա ոչ մի իշ-
խանություն չունի, և որ կյանքը հաղթա-
նակում է: Այսպես արա մարգարեարար
ավետպում է հարությունը:

Նրանք, ովքեր պիտի քարոզեն Ավետա-
րանը, պիտի պատմեն Բեթանիացի անա-
նոն մի կնոջ այս արարքը, բայց այս դրվ-
վագի միջոցով պիտի պատմեն ու ասեն
մանավանդ, որ Հիսուսի օծումը տեղի չու-
նեցավ նրա դիակի վրա, որովհետև անհր-
նար է մահվան մեջ անշարժացնել նրան,
ում նրա տառապանքը մտցնում է կյանքի
մեջ:

88. ՀՈՒԴԱՆ (Մարկ. ԺԴ 10—11)

- ԺԴ 10 Եվ Հուդա Խսկարիովտացին Տա-
ներկոսից մեկը, գնաց քահանայա-
պետների մոտ, որ նրան մատնի նը-
րանց:
- 11 Երբ նրանք լսեցին, ուրախացան և
խոստացան նրան դրամ տալ. և նա
առիթ էր փնտրում, թե ինչպես հար-
մար ժամից մատնի նրան:

Մարկոսը Հուդայի մասին ոչինչ չի ասել այն պահից ի վեր, եթե առաջին անգամ լինելով տալիս էր նրան անոնք որպես տաներկու աշակերտների ցուցակի վերջին մարդը. «...և Հուդա Խակարիովստացուն, որը և նրան մատնեց» (Մարկ. Գ. 19): Ոչ մի տվյալ չի տրվել ընթերցողին, որպեսզի նա իմանա, թե ինչը մղեց դավանակն կատարելու իր գարշնի արարքը: Կերպարի ներքին փոփոխությունը չի հետաքրքրում ավելուարանչին:

Կարենը այն է նրա համար, որ Հուդան «Տաներկուսից մեկն» է (համար 10): Այս պարագան մշտապես նշվում է: Այլ կերպ ասած՝ Հիսուսի շարչարանքների պահին աշակերտների խումբը դարձել է «ինքն իր մեջ բաժանված մի տուն» (Մարկ. Գ. 25): Այդպիսի մի տուն չի կարող կանգուն մնալ: Մի ճեղք է բացվել, որտեղից շարիքը ներս պիտի սպրդի և կատարի քանդումի իր գործը: Որդը մրգի մեջ է: Սրբարև, վերահաս շարչարանքները առիթ պիտի դառնան աշակերտների խմբի քայլայմանը, որոնք բոլորն էլ պիտի փախչեն, եթե Հիսուս ձերբակալված լինի (Մարկ. ԺԴ 50):

Քահանայապետներն իրենք հրճվանքի մեջ են, որովհետև իրենց մոտարությունները շրոտով պիտի իրականանան: Հուդան այս գործողությունից դուրս պիտի գա իրք բավկով:

Դավանանությունը առաջնորդում է հարստության, մինչ Հիսուսի նկատմամբ հավատարմությունը միշտ տանում է տեսակ-տեսակ գրկանքների:

89. ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔԻ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (Մարկ.
ԺԴ 12—16)

- ԺԴ 12 Բաղարչակերաց առաջին օրը, եթե Զատիկի գառն էին մորթում, աշակերտները նրան ասացին. «Ո՞ր և ուզո՞ւմ գնանք-պատրաստեմք, որ Զատիկն ուտեա»:
- 13 Եվ նա աշակերտներից երկուսին ուղարկեց ու նրանց ասաց. «Գնացե՛ք քաղաք և եթե քաղաք մտնեք, կատարի ձեզ մի մարդ, որ ուսին շրի սափոր ունի. գնացե՛ք նրա ետևից»:
- 14 Եվ նա ո՞ր տունը որ մտնի, տանտիռոջ կամեք. Վարդապետն ասում է՝ ո՞ր է այն իշխանը, որ իմ աշակերտների հետ Զատիկը պիտի ուտեն:
- 15 Եվ նա ձեզ ցոյց կտա զարդարված մի վերնատուն. այնտե՛ղ պատրաստեցեք մեզ համար»:
- 16 Նրա աշակերտները գնացին պատրաստելու. եկան այն քաղաքը և գր-

տան, ինչպես որ նա իրենց ասել էր. ու զատիկը պատրաստեցին:

Վերջին ընթրիքի նախապատրաստությունը, որին պիտի մասնակցի Հիսուս իր աշակերտների հետ, հանդիսանում է մանրամասն մի պատմության առարկա: Հիսուս այնպիսի հոգաւարություն է ցուցաբերում դրա նկատմամբ, ինչպիսին ցուց էր տվել մի քանի օր առաջ՝ կազմակերպելու համար իր մուտքը նրուսաղեմ (Մարկ. ԺԱ 1—11): Երկու աշակերտներ են ուղարկվում որպես հետախուզ: Արտասովոր նշաններ օգնում են նրանց՝ ճշտելու տեղի և մարդկանց հարմարությունները: Մի մարդ սափորով չուր է տանում. դա մի քիչ անսովոր է. ընդհանրապես կանայք են կատարում այդ աշխատանքը: Թվում է, որ նախամամությունը ի սկզբանեւ նախատեսել է մոտեցող հանդիսավոր պահը:

Մարկոսը Ավագ հինգշաբթի օրվա ընթրիքը երեկայացնում է որպես զատկական ընթրիք, որը տեղի է ունենում տոնին նախորդող երեկոյան: Այդ մոտեցումը պատմականորեն խիստ անհավանական է: Դուրս է գալիս, որ Հիսուս, որը խաչվել էր ուրբաթ օրը, մահապատճի ենթարկված պիտի լիներ հենց Զատիկի տոնին: Դա նույնքան անհավանական է, որքան պատկերացնել, թե գիլիոտինը գործում է Ծրընդյան օրը:

Պատմականորեն Հովհաննեսի ավելուարանի ժամանակագրությունը անկանած լավագույնն է: Զատիկը ընկնում էր շաբաթ օրը. Հիսուս խաչվեց նախօրյակին, նախքան կկարողանար հստել զատկական ընթրիքի ուրբաթ օրը, երեկոյան: Ընթրիքը, որին նա մասնակցեց իր աշակերտների հետ, արդեն մի տեսակ քաթախված էր մոտալուտ տոնի տրամադրության մեջ, առանց սակայն զատկական ընթրիք լինելու բառիս իմական իմաստով:

Հիսուս երկու աշակերտների միջոցով պատրաստել է տախու հրաժեշտի ընթրիքը: Նա այդ պահը պիտի ապրի Տաներկուսի հետ միասին: Այդ ընթրիքով պիտի նշի նրա մահը և հարությունը որպես նոր Զատիկի, եթե նույնիսկ, ժամանակագրականորեն, զատկական տոնի հրեական ծիսակատարությունն ընկնում է քսանչորս ժամ ավելի ուշ: Կյանքն ավելի կարևոր է, քան օրացուցը: Գոյության յուրաքանչյուր վայրկյան այսուհետև գտնվում է Զատիկի խորիրի ազդեցության տակ: Քրիստոսի մահը և հարությունը քրիստոնյաների համար հանդիսանում են աշխարհի առանցքը:

90. ՈՂԲ ԴԱՎԱԾԱՆԻ ՎՐԱ (Մարկ. ԺԴ
17—21)

- ԺԴ 17 Երբ երեկո եղավ, նա եկավ Տաս-
ներկուսի հետ միասին:
- 18 Եվ երբ սեղած նստեցին ու դեռ ու-
տում էին, Հիսուս ասաց. «Ծշմարիտ
եմ ասում ձեզ, որ ձեզանց մեկը
մատնելու է ինձ. նա, որ ինձ հետ իսկ
ուսում է»:
- 19 Եվ նրանք սկսեցին տրտմել ու ասել
մեկը մյուսի հուսից՝ միքև ե՞ս եմ. և
մյուսը, թե՛ միքև ե՞ս եմ:
- 20 Նա պատասխան տվեց և ասաց.
«Տասներկուսից մեկը, որ ձեռքը ինձ
հետ մոցրեց պեսկի մեջ:
- 21 Ծիշու է, մարդու Որդին կգնա, ինչպես
որ նրա մասին գրված է. բայց վայ՝ այս
այն մարդուն, որի ձեռքով մարդու Որ-
դին կմատնվի. լավ կինենք նրան, եթե
այդ մարդը ծնված անգամ չիներ»:

Ընթրիքն սկսվում է: Երեկո է, խավարի
ժամը: Հիսուս խոսում է դավաճանի մա-
սին, բայց նրա անունը չի տալիս: Նա
պարզապես «Տասներկուսից մեկն» է, «նա,
որ ինձ հետ իսկ ուսում է» (համար 18 և
20): Ամբողջ խումբը կասկածելի է դառ-
նում հանձին իր անդամներից մեկի: Հի-
սուս առաջալներից ոչ մեկի վրա վստա-
հություն ունենալ չի կարող. և, վերջապես,
նրանք էլ չգիտեն, թե ինչ են ուզում: Նը-
րանց տիրությունը, որ կարելի է նմանեց-
նել իրեա այն մեծահարուստ մարդու տրխ-
ությանը (Մարկ. Ժ 22), գգացումն է այն
մարդկանց, որոնք թիկունք են դարձնում
իրենց կոչումին: Նրանցից յուրաքանչյու-
րը իր տված «միթե ե՞ս եմ» հարցի մեջ
ինքն իրեն ընդունում է որպես հնարավոր
մի դավաճանի:

Ինքը Հիսուս նշում է, որ այդ մատնու-
թյունը համապատասխան է գրվածքին: Հին
Կոտակարանում հստակորեն չի խո-
վում մարդու Որդուն վերապահված չար-
շարանքների, ոչ էլ նրա նկատմամբ կա-
տարվելիք դավաճանության մասին, սա-
կայն հաստատ է նրա այն վկայությունը,
որ նույնիսկ բարեկամները լրում են հա-
լածված արդար մարդուն.

Քանզի իմ բարեկամն իսկ,
Որին վստահել էի,
Եվ որ իմ հացն էր ուսում,
Հվարանեց ինձ խարել:
(Սաղմոս ԽԱ 10)

Հիսուս չի դատում այդ մարդուն: Այն
խոսքերը, որ նա ասում է նրա մասին, ո՞չ

դատապարտություն են և ո՞չ էլ հայտա-
րարություն այն մասին, որ դավաճանը ար-
ժամի է դժոխքի: Դրանք ողբասացություն
են՝ արտաքերված աստվածաշնչական ե-
ղանակով. վայ՝ այդ մարդուն. վայ՝ այդ
ծննդին, որից դուրս եկավ այդքան շարիք
ինչպիսի՝ խառնակ գործեր...

Հիսուս հանդես չի գալիս դժբախտու-
թյան մարգարելի դերով: Նա ողբում է ան-
հավատարիմ աշակերտի վրա:

91. ՄԱՐՄՆԻ ԵՎ ԱՐՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ
(Մարկ. ԺԴ 22—26)

- ԺԴ 22 Եվ մինչ դեռ ուսում էին, Հիսուս
հաց վերցնելով՝ օրինեց և կտրեց, տը-
վեց նրանց ու ասաց. «Առե՛ք, ա՛յս է
իմ մարմինը»:
- 23 Եվ բաժակը վերցնելով՝ գոհություն
հայտնեց, տվեց նրանց, և բոլորն էլ
խմեցին դրանից:
- 24 Եվ Հիսուս ասաց նրանց. «Ա՛յս է Ուխ-
տի իմ արյունը, որ կթափվի շատերի
համար:
- 25 Ծշմարիտ եմ ասում ձեզ, որ այլևս որ-
թատունկի բերքից չեմ խմելու մինչև
այն օրը, երբ կիսեմ նորը Աստուծոն
արքայության մեջ»:
- 26 Եվ գոհություն մատուցելուց հետո ե-
լան Զիթենյաց լեռը:

Վերշին ընթրիքը, որին Հիսուս մասնակ-
ցում է Տասներկուսի հետ, տեղի է ունե-
նում ըստ հրեական զատկական ընթրիքի
ծիսակատարության: Նրանց կերպ հացը
անթթամոր հաց է՝ ի նշան Անրիին վերա-
նորոգման: Գինու բազմաթիվ բաժակներ
են օրինվում երեկոյի ընթացքում: Բոլոր-
ված սեղանի շորջ, իբրև ընտանիքի ան-
դամներ, ընթերցում են Եգիպտոսից դուրս
գալու և Կարմիր ծովից անցնելու պատ-
մությունը, ինչպես այն նկարագրված է
Ելից գրքում: Եվ ընթրիքը վերջացնում են
սաղմոսներ երգելով: Այսօր էլ հրեաները
մեծ կարևորություն են տալիս այդ ընտա-
նեկան տռախմբությանը, որը հրեական
տարվա ամենամեծ տոնն է:

Հացը վերցնելու, օրինելու և կտրելու
գործողությունը, որ Հիսուս կատարում է,
հրեական Զատկի ծիսակատարության մեջ
հայտնի ոչ մի բանի չի համապատասխա-
նում, և Մարկոսը որոշակի կերպով չի ա-
սում, թե դա բաղարջ հաց է, այսինքն՝
անթթամոր հաց: Այդ գործողության խոր-
հորդանշական ամենահավանական իմաս-
տըն անտարակուս այն է, որ, ինչպես հա-
ցը կտրվում է, այնպես էլ Հիսուսի մարմ-
նակոր կյանքը կտրվելու է մահապատճով:

Դրան հակառակ, հրեական ծիսարանով նախատեալում են գիտություններ: Հիսուս դրանցից մեկը է վերցնում ակնարկելով այդպիսով անապատում հրեաների կեցության ժամանակ Սինայի լեռան վրա Մովսեսի և Աստուծու միջև կնքված ուխտին: Մովսեսը հրեա ժողովութին կարդացել էր Օրենքի գրքում եղած խոսքերը: Ժողովուրդը պատրաստակամություն էր հայտնել պահելու Օրենքը: Հենց այդ ժամանակ էլ դաշինք էր կնքվել զոհագործման համար մորթված զվարակների արյամբ: Արյան կերպ Աստուծուն մատուցվելու համար թափվել էր զոհաւեղանին, ինկ մրու կերպ Մովսեսի միջոցով շահ էր տրվել ժողովրդի վրա:

Եվ վերցնելով գիրքը ուխտի՝
Նա ընթերցեց ժողովրդի ականջին:
Նրանք ասին. «Այս ամենը, ինչ Տերն
ասաց,
Պիտի ամենք, հնազանդվենք»:
Եվ վերցնելով Մովսեսի արյունն՝
Շահ տվեց այն ժողովրդի վրա ու ասաց.
«Ահա ա'յս է արյունն ուխտի,
Որ կնքեց Տերը ձեզ հետ,
Հստ այս բոլոր խոսքերի»:
(Ելից ԻԴ 7—8)

Հիսուսի մահով, նրա թափված արյամբ և մարմնի նահատակությամբ, վերանորոգվում է Աստուծուն և Խրամելի միջև կնքված ուխտը: Սակայն, ի տարբերություն Ղոկասի և Պողոսի, Մարկոսը չի գործածում «Նոր ուխտ» արտահայտությունը: Միշտ նույն ուխտն է, որ շարունակվում է, քանի որ Հիսուսի արյունն այսութեսու փոխարինում է այն զրեների արյան, որոնք հնում մորթվում էին զոհագործման համար: «Նոր» բառը հանդես է գալիս միայն որթատունի բերքի կապակցությամբ, որ Հիսուս պիտի խմի Աստուծուն արքայության մեջ (համար 25):

Հաղորդության խորհուրդը, որ Եկեղեցին նշում է, և որի հաստատումը, ըստ Մարկոսի, տեղի ունեցավ վերշին ընթրիքի ժամանակ, որին մասնակցեց Հիսուս իր տասներկու աշակերտների հետ, այսպիսով ձգվում է անցյալի և ապագայի միջն:

— Նրա անցյալը հրեական Զատիկն է և այն ուխտը, որ կնքվեց Եգիպտոսից հրեաների գաղթի ժամանակ Աստուծուն և նրա ժողովրդի միջն:

— Նրա ապագան Աստուծուն թագավորությունն է, որ հրեական ավանդությունը պիրում է Ակարագրել որպես մի խնջուք, որի ընթացքում առատորեն հոսում է գիշեն:

— Այդ երկուսի միջև Եկեղեցին հանդիսավոր մատուցումն է կատարում Մի ընթրիքի, որով նա վերապրում է Քրիստոսի մահը և հարությունը:

Հիսուս տրվում է ամբողջությամբ, մարմանով և արյամբ: Աշակերտներն ընդունում են նրան, որպես գայթակիլից Մի ընծայի. Մի մարդ, որ ձի է ընդունում կյանքը նրա, ով տրվում է, ինչպես կարող է ինքը ևս չտալ իր անձը:

92. ԱՌԱՋՅԱԼԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ (Մարկ. ԺԴ 27—31)

- ԺԴ 27 ԵՎ Հիսուս նրանց ասաց. «Այս գիշեր ամենքդ գայթակղվելու եք իմ պատճառով, որովհետև գրված է. «Պիտի հարվածեմ հովվին, և ոչխարները պիտի ցրվեն»:
28 Բայց իմ հարությունից հետո ձեզնից առաջ Գայլիխա պիտի զնամ»:
29 Պետրոսը պատասխանեց և ասաց նրան. «Թե եկուզ բոլորն էլ գայթակղվեն, բայց ևս չեմ գայթակղվի»:
30 Եվ Հիսուս նրան ասաց. «Ծշմարիտ եմ ասում քեզ, որ դու այս գիշեր իսկ, դեռ աքաղաղը չկանչած, երեք անգամ պիտի ուրանա ինձ»:
31 Իսկ Պետրոսն առավել ևս պնդում էր ու ասում. «Թե քեզ հետ մեռնել իսկ հարկ լինի, քեզ չեմ ուրանա»: Եվ ամենքն էլ նույն էին ասում:

Հիսուս և տասներկու աշակերտները հենացել էին քաղաքից, որտեղի տեղի էր ունեցել վերշին ընթրիքը, որին մասնակցել էին բոլորը միասին: Այժմ նրանք Զիթենյաց լեռ տանող ճանապարհի վրա են, Կենդրոնի հանդիպակաց կողմում (Մարկ. ԺԴ 26): Այս խոսակցությունը, որ ավելարանիչը մեջ է բերում, կարելի է ենթադրել, որ տեղի է ունեցել Կենդրոնի ձորի զափթափերի վրա ինչ-որ տեղ: Չորի խորը հոսում է եկեղեղատը: Մթնոլորտը ծանր է, ճնշող:

Սննդաղառնալով Զաքարիայի գրքի մի հատվածին՝ Հիսուս ցուց է տալիս, թե ինչպես փորձության հետևանքով ընթրություն է կատարվում մարդկանց խմբի մեջ, ինչպիսին Խրամելի ժողովուրդն էր: Երբ հովվիը հարվածվում է, ոչխարները ցըրվում են. նրանց երկու երրորդը կորչում է, իսկ մնացած մեկ երրորդը կարիք ունի անցնելու մաքրագոտող կրակի բուլից՝ կազմելու համար խոստումակից մնացորդացը.

Վե՛ր կաց, ո՞վ սոր, իմ հովվի վրա
Եվ այն մարդո՞ւ իմ ընկերոջ,—
Ասում է Տերն ամենակալ.
Պիտի հարվածեմ ես իմ հովվին,
Եվ ցիրուցան պիտի լինեն ոչխարհերն այն.
Պիտի դարձեմ ապա ձեռքն իմ փոքրերի
դեմ:
Եվ այն օրը,—ասում է Տերն,—այնպես
պիտի լինի,
Որ երկու երրորդը նրանց պիտի սատկի
ու պակասի,
Խսկ մեկ երրորդը պիտի մնա:;
Եվ այն երրորդ մասը պիտի անցկացնեմ
ես կրակից,
Պիտի զտեմ, ինչպես արծարն են զտում,
Պիտի փորձեմ, ինչպես փորձում են ոսկին:
Նա պիտի տա անուն իմ,
Խսկ ես պիտի լսեմ նրան ու ասեմ.
Սա՛ է ժողովորդն իմ:
Նա պիտ ասի. իմ Տեր Աստվածը դո՛ւ ես:
(Զաքարիա ԺԴ 7—9)

Մաքրագտող փորձության մարգարեական
ծրագիրը վերաբերում է նաև առաքալե-
րին: Հիսուսի երևոթական ձախողանքը
պատճառ պիտի դառնա նրանց անկման,
հակառակ հավատարիմ մնալու մասին ար-
ված բողոքներին վեհանձն սրտի տեր մի
մարդու կողմից, ինչպիսին Պետրոսն է,
որին և հետևում են մյուս բոլոր աշակերտ-
ները:

Սակայն այդ անկումից վեր պիտի կննա
նրանց մեկ երրորդից ավելին՝ տասնմեկ
հոգի տասներկուսի վրա, որովհետև Հի-
սուս միշտ իր ետևից էր տանում նրանց: Չարչարանքների ճանապարհի վրա նա
գնում էր նրանց առջևից, երբ բարձրանում
էին երուաղեմ (Մարկ. Ժ 10): Հարու-
թուն առնելուց հետո նա դարձալ պիտի
գնա նրանց առջևից՝ մահվան այդ վայրից
դուրս քերելու համար նրանց և առաջնոր-
դելու Գալիլիա, այն գավառը, որտեղ ար-
դեն սերմանվել էին Ավելատարանի սերմերը
և որտեղ այժմ դրանք ծիլ պիտի արձակե-
ին ու մեծանային:

Գալիլիան հրեական իշխանությունների
կողմից արհամարիւած մի գավառ է: Հե-
տանուներ մաս են գալիս այստեղ և Կեղ-
տոտում այն: Բայց չէ որ Բարի լուրը ամ-
բող աշխարհի համար է: Երուաղեմը
պիտի փորձի խեղդել այն, առանց սակայն
հաջողելու:

93. ԳԵԹՍԵՍՄԱՆԻ (Մարկ. ԺԴ 32—42)

ԺԴ 32 Եկան այն զյուղը, որը Գեթսեմանի
էր կոչվում: Եվ նա աշակերտներին
ասաց. «Նստեցնք պատեղ, մինչև ես
աղոթեմ»:

- 33 Եվ նա իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին և սկսեց տիրել ու հոգս անել:
34 Այն ժամանակ նրանց ասաց. «Տիսուր է հոգիս մեռնելու աստիճան. մնացք՝ պատեղ և արթո՛ւն կացեք»:
35 Եվ փոքրինչ առաջ գնալով՝ երեսի վրա ընկապ գետին. և աղոթում էր, որ եթե կարելի է, այդ ժամը իրենից հե-
ռանան:
36 Նա ասում էր. «Արբա, Հա՛յր, ամեն ինչ քեզ հնարավոր է. այս բաժակը ինձնից հնուացրո՛ւ, բայց ոչ թե ինչ-
պես ե՞ս եմ կամենում, այլ՝ ինչպես դո՛ւ ես կամենում»:
37 Եվ Հիսուս եկավ ու նրանց քնած գլ-
ուտավ. և Պետրոսին ասաց. «Սիմ՛ն, ննջո՞ւմ ես, չկարողացա՞ր մեկ ժամ արթուն մնալ:
38 Արթո՛ւն կացեք և աղոթեցնեք, որպես-
զի փորձության մեջ չընկնեք: Հոգին
հոժար է, բայց մարմինը՝ տկար»:
39 Եվ նորից գնաց, աղոթքի կանգնեց ու
նույն բաներն ասաց:
40 Կրկին անգամ դարձավ այնտեղ և նր-
անց քնի մեջ զտավ. որովհետև նրանց
աշքերը ծանրացել էին, և չէին իմանում,
թե ինչ պատասխան տան նրան:
41 Երրորդ անգամ եկավ և նրանց ասաց.
«Ննջեցնք պատմետն և հանգատա-
ցեք, քանի որ վախճանը հասել է. ե-
կավ ժամը, և ահա մարդու Որդին
մատնվում է մեղավորների ձեռքը:
42 Օ՛հ, վե՛ր կացեք, գնանք, որովհետև
ահա մոտեցավ նա, ով ինձ մատնելու
է»:
- Գեթսեմանին ձիթայուղի շտեմարան
է, ձիթենիներով պատած մի գյուղ, որը,
լուս ավանդության, գտնվում էր Զիթենյաց
լեռան ստորոտում, տաճարի առաջամասի
հարթ տարածությունից դեպի ներքև: Հի-
սուս իր աշակերտներին դասավորում է
տարբեր տնելերում, որովհետև նրանք մի
քիչ ավելի մոտիկից կամ հեռվից ներկա
են լինում նրա աղոթքին: Մեծամանու-
թյունը հրավիրվում է հատելու. ոչ մի ու-
րիշ հրահանգ: Այս սպասման ընթացքում
է թերևս, որ Հուդան բաժանվում է խմբից՝
գնալ-գտնելու համար զինված ջոկատը,
որի հետ նա պիտի վերադառնա ձերքա-
կալելու իր տիրոջը:
- Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը՝
այն երեք աշակերտները, որոնց Հիսուս իր
հետ էր վերցրել Հայրոսի աշշկա հարու-
թյան (Մարկ. Ժ 37) և այլակերպության (Մարկ. Ժ 2) ժամանակ, տարվում են
մյուսներից մի քիչ ավելի հեռու: Տերը նը-

րանց հայտնում է իր տխուր լինելը: Նա նրանց պատվիրում է լինել արդուն և աշալորչ, մի բան, որ արդեն հաճախարարել էր նրանց, եթե խոսել էր Երուսաղեմի կործանման և գալիք փորձությունների մասին (Մարկ. ԺԳ 33—37):

Գալով նրան՝ նա մի քանի մետք հեռանում է, ապա փլում գետին և անձնատուր լինում աղոթքի՝ մեն-մենակ:

Սրտառուչ, գեղեցիկ խոսքեր են դուրս գալիս նրա սրտից: «Արքա»-ն արամերեն «հայրիկ» բառն է, որով այդ ժամանակաշրջանի հրեա երեխաները կանչում էին իրենց հորը: Հիսուս իր տառապանքի մեջ դառնում է մի փոքրիկ երեխա: Նա խընդրում է հեռացումը իրեն երկայացված դառնության բաժակի (տես Մարկ. Ժ 35—40), հեռացումն այն միակ ժամի, եթե տեղի է ունենալու իր կյանքի դրաման և աշխարհի փրկությունը: Սակայն, փոքրիկ երեխաների նման, նա գիտի նաև բաց անել իր հոգին իր Հոր կամքի առաջ և ընդունել Աստուծո թագավորությունը (Մարկ. Ժ 13—16):

Սուաշին անգամ նա աղոթում է այդպես (համար 35—36): Երկրորդ անգամ, անդրադառնալուց հետո, որ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեաը լքել են իրեն, նա նորից նոյն աղոթքն է անում (համար 39): Այդ աղոթքը օգնում է նրան դիմանալու այն փորձությանը, որ պաշարում է նրան և ստիպում հրաժարվել ու փնտրել ավելի հեշտ ճանապարհներ:

Երեք աշակերտները թեև ամենամտերիմներն էին Հիսուսի, սակայն բավականաշափ ուժեղ չգտնվեցին: Նրանք թույլատվություն են ստանում քննելու այն դեպքում, եթե պետք էր վեր կենալ՝ դեմ դուրս գալու համար դավաճանանին: Պետրոսը նորից դառնում է «Սիմոն» (համար 37): Այդ անունը նրան այսու չեր տրվել այն օրից ի վեց, եթե նա կանչվել էր մաս կազմելու Տասներկուսին (Մարկ. Գ 16): Այդ անվանումով Հիսուս նրան դնում է այն վիճակի մեջ, ինչ որ նա էր առաքյալ լինելուց առաջ: Սուաքաների խումբը, որը կազմվել էր «Հիսուսի հետ լինելու համար», այլև գոյություն չուներ որպես այդպիսին (Մարկ. Գ 14):

Գեթսեմանիում փոկ է գալիս այն ամենը, ինչ կառուցվել էր Գալիլիայում Ավետարանի քարոզության սկզբից ի վեր: Այնտեղ Հիսուս քարոզում էր՝ սկսելով այսպիսին:

Մոտեցավ Աստուծո թագավորությունը:
(Մարկ. Ա. 15)

Այս հուսավից մերձավորությունը պատեղ տեղի է տախի մի ուրիշ, մտահոգիչ մերձավորության, որ Հիսուս անվանում է հնաւելյալ նախադասության մեջ, որով և ավարտվում է այս դրվագը.

Մոտեցավ, որ ինձ մատնելու է:
(Մարկ. ԺԴ 42)

94. ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ (Մարկ. ԺԴ 43—52)

- ԺԴ 43 Եվ մինչ նա դեռ խոսում էր այս, եկավ Հուղարիովացին՝ Տասներկուսից մեկը, և իր հետ՝ սուսերներով, մահակներով զինված ամբոխ՝ եկած քահանայապետների, դպիրների ու ծերերի կողմից:
- 44 Մատնիշը նրանց նշան էր տվել՝ ասելով. «Ռու հետ ես համբուրվեմ, նա՛ է բռնեցե՛ք նրան և տարե՛ք զգուշությամբ»:
- 45 Եվ մոտենալով նրան՝ իսկովն ասաց. Ռաբբի՛, Ռաբբի՛. և համբուրեց նրան:
- 46 Եվ նրանք ձեռք դրեցին նրա վրա ու բռնեցին նրան:
- 47 Ապա նրա շորջը գտնվողներից մեկը սուրը քաշեց և զարկեց քահանայապետի ծառային ու նրա ականչը կըտրուեց:
- 48 Հիսուս դարձավ և ասաց նրանց. «Սուսերներով և մահակներով դուրս եք եկել ինձ բռնելու որպես ավազակի»:
- 49 Ես միշտ ձեզ մոտ էի և ոսոցանում էի տաճարում. և ինձ չըրնեցիք. բայց այս եղավ, որպեսզի մարգարեների զրվածքները կատարվեն»:
- 50 Այն ժամանակ աշակերտները բոլորն էլ լքեցին նրան և փախան:
- 51 Եվ մի երիտասարդ գնում էր նրա ետնից՝ իր մերկ մարմնի վրա մի սավան գցած: Երիտասարդները բռնեցին նրան.
- 52 և նա թողնելով հագի կտորը՝ մերկ փախավ նրանցից:

Հուդան նորից այնտեղ է. նա առաջնորդում է դատական ատյանի կողմից ուղարկած մի ջնկատ: Նրանք այնպես են զինված, կարծեն գալիս են ձերբակալելու մի վտանգավոր հրոսակապետի: Մատնիշի վարմունքը Հիսուսի նկատմամբ նման է աշակերտի վարմունքի, ինչ որ առավել զգվելի է դարձնում նրան: Նա Հիսուսին ասում է «Ռաբբի», այսինքն՝ «Վարդապետ»: Ապա համբուրում նրան: Համբուրը սիրո և հարգանքի նշան էր, որով հրեա երիտասարդները հոժարակամ իրենց զգաց-

մունքն էին արտահայտում իրենց ուսուցիչների համեմապ:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունը, այսպիսով, ամրողապես եղծվում է: Այդպիսին է այժմ հարաբերությունը Հիսուսի և Հոգուայի միջև: Այդպիսին է նաև մյուս աշակերտների համար, որոնք, փոխանակ «հետևներու» իրենց ուսուցչին, ինչպես բնական կերպով անում են աշակերտները (Մարկ. Ա. 16—20), կարողանում են միայն փախուստ տալ (համար 50):

Երկու անհայտ անձնավորություններ բեմ են հանված ավետարանի կողմից. մեկը նա է, որ վիրավորում է քահանայապեսի ծառապին (համար 47), իսկ մյուսը՝ այն երիտասարդը, որը փախում է ադամանկան մերկությամբ (համար 51—52): Երկուսն էլ հետաքրքիր ձևով լոյս են սփոռում ձերբակալութան այս տեսարանի վրա:

Առաջին պատճենական մի շարժում է կատարում այն պահին, երբ զինված խումբը բռնում է Հիսուսին: Հայտնի չէ, թե ով է նա: Սուրբ Հովհաննեար հստակորեն ասում է, որ նա Սիմոն-Պետրոս է, սակայն Մարկոսը նորա անունը չի տալիս: Հասցված հարվածի ազդեցությունը գրեթե աննշան է. ականջի պոկված մի կոտոր չնշին մի վնասվածք է: Այս ծիծաղարժ մանրամասնությունը վկայակոչելով՝ ավետարանիշը ընդգծում է այն հակադրությունը, որ գործոցում ունի կատարելապես անօգուտ զինված մի պատճենանության և Հիսուսի ազնիվ վարվելակերպի միջև: Նա տերն է կացության և պահարակում է իր հակառակորդների անտրամարանական վարմունքը՝ գիտակից այն բանին, որ կատարվում են մարգարեների գրվածքները: Այժմ նա պատրաստ է լիովին ընդունելու իրեն վերապահված չարչարանքները:

Գալով երկրորդին, որը փախուստի է

դիմում՝ թողնելով իր մարմնի մերկությունը ծածկող սավանը, մարդիկ այդ պատահարի մեջ հաճախ ցանկացել են տեսնել ավետարանի անձնական մի հիշատակը: Հավանական է, որ այդ անձը ինքը Մարկոսը եղած լիներ, այն ժամանակ Երուսաղեմի երիտասարդ մի բնակիչ, որի հետ կարող էր պատահած լինել այս պատմությունը, և նա էլ կարող էր այն հիշակատած լինել իր գործի մեջ՝ մի տեսակ որպես անձնական ստորագրություն: Սա բոլորովին էլ անհավանական չէ: Սակայն թվում է, թե այս դեպքն ունի մանավանդ խորհրդանշական մի իմաստ, որ թերադրում են տեքստում գործածված բառերը: Խոսքը վերաբերում է մի «երիտասարդի»: Սյու բառը հետագայում գործածվում է թափուր գերեզմանի դրվագում ցույց տալու համար այն մարդուն, որը կանանց ավետում է Հիսուսի հարությունը (Մարկ. Ժ 5): Այս ևս փաթաթված էր «սպիտակ պատմումանի» մեջ, ճիշտ ինչպես պիտի լիներ Հիսուսի դիակը խաչից հշեցվելուց հետո (Մարկ. Ժ 6): Այս անձը, որն իր պատանքը թողնում է մանկան գործակալներին և ամրողովին մերկ գնում դեպի ազատություն, անտարակույս խորհրդանշական մեկ կերպարն է իր պատանքը գերեզմանի մեջ թողնելով հարություն առնոյ Հիսուսի:

Արդարն, Հիսուս պիտի ձերբակալվի և տարվի տանջանքի մատնվելու: Սակայն ոչ մի թշնամի ուժ ի վիճակի չէ ամրողապես արգելափակելու նրան. նորա կյանքը խույս պիտի տա իր հակառակորդների ձեռքերից, ճիշտ ինչպես այդ փախուստական երիտասարդը, որը, խորհրդանշականուն, դուրս սահեց նրանց մատների արանքից:

(Չարունակելի)

